ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 հոկտեմբերի 2026թ. թիվ 723-Ա

Ս.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 164 հոդվածների, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հաշվի առնելով Ս. Մարգարյանի դիմումը և «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ Նունե Մատինյանի համաձայնագիրը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Սիլվա Մարգարյանին տրամադրել 2026-2027թթ. աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդը ս/թ հոկտեմբերի 7-ից մինչև նոյեմբերի 3-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր:

2. Ս. Մարգարյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող նշանակել «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ Նունե Մատինյանին:

3. Ս.Մարգարյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի նոյեմբերի 4-ից:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-10-06 15:05:32 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 6
ք.Վանաձոր